ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍՏԵՓԱՆԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ստեփանավան համայնք, հասցե՝ Սոս Սարգսյան 1, հեռախոս՝ (0256) 2-22-33, էլ. փոստ՝ stepanavan.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«29» հունվարի 2021 թվականի N 09

ԱՆՉԱՓԱՀԱՍ ԼԱՈՒՐԱ ԱՆԴՐԵՅԻ ՀՈՒՆԱՆՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Անչափահաս Լաուրա Անդրեյի Հունանյանի /ծնված՝ 30.06.2016թ./ մայրը՝ Արուս Սիրակի Հունանյանը մեկնել է Ռուսաստանի Դաշնություն արտագնա աշխատանքի: Շուրջ երեք տարի է երեխայի խնամքով և դաստեարակությամբ զբաղվում է տատը՝ Տատյանա Եվգենիի Հունանյանը:

Լաուրա Անդրեյի Հունանյանի մայրը՝ Արուս Սիրակի Հունանյանը ունեցել է միայնակ մոր կարգավիճակ: Վերջինս ներկայումս գտնվում է Ռուսաստանի Դաշնությունում:

Անչափահաս Լաուրա Անդրեյի Հունանյանի նկատմամբ խնամակալություն սահմանելու համար Ստեփանավանի խնամակալության և հոգաբարձության մարմին է դիմել երեխայի տատը՝ Ստեփանավան համայնք ք. Ստեփանավան 409 Դիվիզիա փողոց թիվ 13 տան բնակչուհի՝ Տատյանա Եվգենիի Հունանյանը, որի հետ էլ բնակվում է անչափահաս Լաուրա Անդրեյի Հունանյանը:

Հիմք ընդունելով Տատյանա Եվգենիի Հունանյանի 21.01.2021թ. թիվ Հ-25 դիմումը Ստեփանավանի համայնքապետարանի խնամակալության և հոգաբարձության հանձնաժողովի 27.01.2021թ. նիստի եզրակացությունը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 33, 37, 38 հոդվածներով, «Երեխայի իրավունքների մասին» ՀՀ օրենքի 8, 12 հոդվածներով, ՀՀ կառավարության 2016թ. հունիսի 2-ի թիվ 631-Ն որոշման 9-րդ կետի պահանջներով, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով՝ ***որոշում եմ.***

1. Անչափահաս Լաուրա Անդրեյի Հունանյանի /ծնված՝ 30.06.2016թ. ծննդ. վկայական V-ИК 820295/ նկատմամբ խնամակալ նշանակել չափահաս գործունակ քաղաքացի՝ Տատյանա Եվգենիի Հունանյանին /անձնագիր՝ AT0213478, տրված 18.07.2019թ., 099-ի կողմից/:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ Ա. ԳՐԻԳՈՐՅԱՆ